

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ

03.12.2014



Ամեն տարի դեկտեմբերի 3-ը նշվում է որպես Հաշմանդամների միջազգային օր: Շուրջ 22 տարի աշխարհի բազմաթիվ պետություններ, առաջադեմ մարդիկ, հասարակական կազմակերպություններ անում են հնարավորինը, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձիք ունենան հավասար հնարավորություններ և իրավունքներ: Իհարկե բավականին աշխատանք է կատարվել այս ուղղությամբ նաև Վայոց ձորի մարզում:

Հաշմանդամների միջազգային օրը ևս մեկ առիթ է իմի բերելու կատարված աշխատանքները, գնահատելու դրանց արդյունքում մարզի հասարակական կյանքին, ինչպես նաև տնտեսական գործունեության ոլորտում հաշմանդամների հնարավոր ներգրավումն ապահովելու պայմանների առկա վիճակը: Հայաստանի Հանրապետության կառավարության, միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց հասարակության մեջ լիակատար ինտեգրմանն ուղղված ծրագրեր են իրականացվում, որոնց արդյունքն ակնառու է: Մակայն դեռ երկար ճանապարհ կա անցնելու, դեռևս լուծվելիք բազմաթիվ խնդիրներ կան:

Իսկ ֆիզիկապես մատչելի միջավայրի ստեղծումից ոչ պակաս կարևոր է հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ բարոյահոգեբանական միջավայրի ձևավորումը, նրանց նկատմամբ հանրության վերաբերմունքի արմատական վերափոխումը: Համոզված եմ, որ ցանկալի այդ արդյունքին մենք հասնելու ենք մարզային կառույցների, հասարակական կազմակերպությունների, բարեհոգի անհատների և այդ խնդիրներով մտահոգ անձանց համախմբված աշխատանքի միջոցով:

Իմ գոհունակությունն եմ հայտնում Վայոց ձորի մարզի հաշմանդամների խնդրով մտահոգ բոլոր անձանց և կազմակերպություններին Աստվածահաճո իրենց գործունեության համար: Հարգելիներս, ձեզ առավել մեծ եռանդ և ուժ երախտագիտության արժանի ձեր ձեռնարկներում:

Իսկ դուք, սիրելի բարեկամներ, համոզված եղեք, որ մարզային իշխանությունների

նպատակն է ստեղծել պայմաններ, որ լիովին պաշտպանված լինեն ձեր
իրավունքները, որպեսզի դուք ակտիվ մասնակցություն ունենաք մեր մարզի
հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:
Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, ձեր ընտանիքներին՝ խաղաղ ու աժանավայել
կեցություն: